ԼՈՒՍԻՆԵ ԶԱՎԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Երաժշտագետ, կոմիտասագետ, դոցենտ, արվեստագիտության թեկնածու,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ
E-mail: lusine_sahakyan72@mail.ru

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ՝ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ԲԱՑԵԼՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ

Հայ ազգային դասական կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտաս Վարդապետի բազմաբեղուն գործունեությունն այսօր ուսումնասիրվում է համաշխարհային մշակույթի չափանիշներով. Կոմիտասը, որպես առաջադեմ արվեստագետ, կոմպոզիտոր, բանահավաք-գիտնական և վերջապես, Կոմիտասը որպես երաժշտալուսավորական գործիչ, ում բաղձալի երազանքն էր՝ բացել հայկական կոնսերվատորիա: Վարդապետի կյանքի վերջին կամ Պոլսի շրջանը կապված էր երաժշտանոց բացելու նպատակների հետ, երաժշտանոց, ուր կուսանեին հայ շնորհալի երիտասարդները:

Կոնսերվատորիա բացելու գաղափարը Կոմիտաս Վարդապետի մոտ ծրագրվում էր տարիներ շարունակ: 1893 թվականից ստանձնելով Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի երգեցողության ուսուցչի պաշտոնը, ղեկավարելով երգչախումբը, Կոմիտասը մեծ ուշադրություն էր դարձնում տիրացուների երաժշտական գիտելիքներին:

1895 թվականին Գևորգյան ճեմարանի դպրոցական երգեցողության առարկայի համար կազմում է ուսումնական ծրագիր:

«Գ» դասարանի աշակերտների համար Կոմիտաս Վարդապետը մշակում է եկեղեցական երաժշտության ծրագիր, որը ներառում էր. ա) Հայոց արդի ձայնանիշների գյուտը բ) հասկացություն Ձայնի, Տևողության, Երաժշտական նշանների, Ձայնային երաժշտության, Ձայների հարաբերական չափի, Ութ բուն ձայնեղանակների մասին (1. էջ18):

Հայտնի է, որ Կոմիտասը 1896-1899 թվականներին ուսանել է Բեռլինում՝ ստանալով համալսարանական և կոնսերվատորիական կրթություն: Ռ. Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում նա հմտանում էր երաժշտա-տեսական գիտելիքների մեջ, յուրացնում դասական հարմոնիայի և պոլիֆոնիայի օրինաչափությունները: Վիլհելմ Ֆրիդրիխ Արքունական համալսարանի փիլիսոփայության բաժնում Կոմիտասն ավարտում է երաժշտական փիլիսոփայության պատմության դասընթացները:

Գերմանական ճշգրիտ կրթական համակարգն ու Բեռլինի մշակութային կյանքը կարևոր նշանակություն ունեցան Կոմիտասի ստեղծագործական անհատականության և մասնագիտական ձևավորման վրա:

Իր կյանքի տարբեր շրջափուլերում, Փարիզում, Հռոմում, Շվեյցարիայի քաղաքներում Կոմիտասն առնչվում էր անվանի կոմպոզիտորների, տեսաբանների և երաժիշտ-կատարողների հետ: Նրա համար սկզբունքային է դառնում երաժշտական-մասնագիտական կրթության հարցը (2. էջ 84):

Բազմաթիվ են վկայություններն այն մասին, թե Կոմիտաս Վարդապետը որքան կարևորություն է տվել համակարգված երաժշտական կրթությանը:

1902 թ., մշակութային գործիչ Վահրամ եպիսկոպոս Մանկունուն հղած նամակում Կոմիտաս Վարդապետը խոսում է երաժշտատեսական գիտելիքների համակարգված դասագրքերի մասին (3. էջ 68):

Հաջորդ՝ ծրագրային նշանակության գրությունը 1910-ին Կոմիտաս Վարդապետի՝ Մաթևոս Իզմիրլյան Կաթողիկոսին հղած զեկուցագիր-նամակն է, Հայ հոգևոր երաժշտության բարեփոխման իր ծրագիրը.

«Ա. Բանալ հայ հոգևոր երաժշտարան, վարժապետ, երգիչ, դպիր, դպրապետ, երաժիշտ ու առհասարակ հոգևոր պաշտոնեություն զինել. կորստից փրկել մեր նախնի երաժշտության բեկորները, զարգացնել ազգային գեղարվեստ և մեր երաժշտական ճոխ գրականությունը ծանոթացնել օտարներին՝ ուսումնասիրություններ անելով և համերգներ տալով:

Բ. Հաստատել Մայր Աթոռի տպարանում երաժշտական տպագրական բաժանմունք և հրատարակել, մի ձեռնհաս քննիչ մարմնի հսկողությամբ, հոգևոր երգեցողության ամենատեսակ գրքեր ու տետրեր:

Գ. Ընդհանուր հայ եկեղեցիներում պարտադիր անել միօրինակ հոգևոր երգեցողություն:

Դ. Հայ եկեղեցիներում հանապազօրյա դպրաց դաս սահմանել:

Ե. Դպիրներին ընդունել խիստ ընտրությամբ, իսկ դպրապետներից պահանջել անթերի պատրաստություն եկեղեցական գիտելիքների, երաժշտության և հաստատել պաշտոնի մեջ մերձավոր հոգևոր բարձր իշխանության միջոցով և հանձնել նրա հատուկ հսկողությանն ու խնամքին:

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Աննա Սենի Արևշատյանի՝
20.10.2021 թ., ընդունվել է տպագրության՝ 22.10.2021 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 5.10.2021 թ.

Զ. Հայ դպրոցներում հաստատել կանոնավոր և ծրագրված երգեցողության և տարրական երաժշտության վկայված ուսուցիչների ձեռքով» (3. էջ 187-188):

Զ. Հայ դպրոցներում հաստատել կանոնավոր և ծրագրված երգեցողության և տարրական երաժշտության վկայված ուսուցիչների ձեռքով» (3. էջ 187-188):

Բարեփոխման ծրագրերը Գևորգյան հոգևոր ճեմարանում մնում են անկատար:

Էջմիածնի միաբանությունն իր լայնահուն նպատակների համար անիրականանալի համարելով, Կոմիտասը մտածում է Էջմիածնից դուրս գալու և հայաշատ որևէ մեծ մայրաքաղաքում հաստատվելու համար:

Թիֆլիսի հոգևոր առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը Կոմիտաս Վարդապետին առաջարկում է Ներսիսյան դպրոցի ուսուցչությունը: Կոմիտասը ծանոթ էր Թիֆլիսի մշակութային կյանքին, նա Թիֆլիսի Վերնատան հարգված Մեծերից էր, բայց Ցարական Ռուսաստանում նա անիրագործելի էր համարում հայկական երաժշտանոցի հիմնադրումը: Կոմիտասը թրքաՀպատակ կամ օսմանահպատակ էր: Ցարական Ռուսաստանում այդ հանգամանքի պատճառով հաճախ էին սահմանափակվում նրա երաժշտա-լուսավորական ծրագրերը (4. էջ 152):

Կոմիտասը գիտեր նաև, որ Փարիզում, նույնպես անհնարին էր հավաքել անհրաժեշտ միջոցներ: Վարդապետը բարեկամական խորհրդով դիմում է փարիզաբնակ իր ընկերոջը՝ գրող, բանաստեղծ Արշակ Չոպանյանին: Չոպանյանը շատ էր գոջում Կոմիտասին տված իր խորհրդի համար. «Պոլսի մեր մեծ համայնքի մեջ հայ մտավոր և ազգային կյանքի վերազարդում մը սկսած էր: Կոմիտասը հոն պիտի լիովին ըմբռնվեր, խրախուսվեր և օժանդակվեր իր գործը լայնորեն կատարելու: Լսեց անգամ մը ևս իմ բարեկամական խորհուրդիս և գնաց Պոլիս» (5. էջ 484):

Բացի Չոպանյանի խորհրդից, ինչն է ստիպում Կոմիտասին գնալ Պոլիս: Նա գիտակցում է իր ապրած բարդ պատմաքաղաքական ժամանակաշրջանը, ճանաչում թուրքական դիվանագիտության կնճռոտ կողմերը: Այդուհանդերձ, 1910 թվականից Կոմիտասը հաստատվում է սուլթանների մայրաքաղաք՝ Կոնստանդնուպոլսում:

Պոլսում Վարդապետը հաստատվում է մի քանի պատճառով. Թուրքիան իր ծննդավայրն էր, դեռ հռոմեացիներին հայտնի, Քյոթահիայի բուժիչ ջրերով, ուր Կոմիտասը հաճախ մեկնում էր կազդուրվելու, հոր ու մոր երգած երգերը ձայնագրելու: Պոլսի սահմաններում դեռ գրառված և ուսումնասիրված չէին հայոց երգերը, պետք էր տարածել հայ ժողովրդական բնատոհմիկ երգը:

Լինելով թուրքահպատակ՝ Կոմիտասը հույսեր էր փայփայում, որ 1908 թ. Թուրքիայում իշխանության եկած «Իթթիհատ վե թերաքի» - «Միություն և Առաջադիմություն» կուսակցությունն ազգային փոքրամասնությունների համար պիտի իրագործեր իր բարեփոխումներն ու արտոնությունները: Բազմաթիվ հայ մտավորականներ այդ շրջանում կենտրոնացան Պոլսում, խոսվում էր նաև Հայկական համալսարան բացելու մասին (6. էջ 2):

Պոլսում այդ շրջանում գործում էր հայկական վեց մեծ օրաթերթ: Սահմանադրության տարիներին ակտիվանում էին Եվրոպայի հետ մշակութային առնչությունները:

Պոլսի պես բազմազգ քաղաքում գործում էին բազմաթիվ հայկական եկեղեցիներ և դպրոցներ, որտեղ հայ երգը աղավաղված էր թուրքական ազդեցությամբ՝ տգետ տիրացուների կողմից: Անհրաժեշտ էր հղկել և զտել Պոլսի եկեղեցիներում կատարվող հայ հոգևոր մոնոդիան՝ առհասարակ օտար ազդեցություններից, քանի որ եկեղեցին էր Պոլսի հիմնական մշակութային օջախը:

Եվ վերջապես, Կոմիտասը Պոլսում պիտի իրագործեր իր բարձալի երազանքը՝ հիմնել հայկական երաժշտանոց, հաստատություն, որն, ինչպես կարծում էին պոլսեցիները, իր շուրջը կհավաքեր անհայտության մեջ կորչող շատ գանձեր:

Կոմիտասի երաժշտա-լուսավորական գործունեությունը պոլսեցիներն ընդունեցին գրկաբաց: Ընդ որում, թուքական վերնախավը, ի տարբերություն հայ կղերականության որոշ շրջանակների, Կոմիտաս Վարդապետին մինչև եղերական 1915 թիվը համարում էին Թուրքիայի ամենաազդեցիկ արվեստագետներից մեկը: Կոմիտաս Վարդապետի համերգներին գրեթե միշտ ներկա էին թուրք պաշտոնյաներ և օտարերկրյա դիվանագետներ: Նրա ընդգրկուն գործունեությունը գնահատվում և միևնույն ժամանակ վերահսկվում էր թուրքական մտավորականության և կառավարական վերնախավի կողմից (7. էջ 138):

Կոնսերվատորիա հիմնելու ծրագրերը Կոմիտասի մոտ մշակվում էին մանրամասն և հստակ: Պոլսի, հայաշատ մյուս քաղաքների (Իզմիր, Ադաբազար), Մերձավոր Արևելքի մշակութային կենտրոնների բոլոր համերգ-դասախոսությունների նպատակն ու հասույթն ուղղված էր Երաժշտանոցի կազմակերպման աշխատանքներին:

Անգամ Վարդապետի առնչություններն ու կապերը թուրքական վերնախավի, «Թյուրք օջախի». սուլթանական ընտանիքի Մեհմիտ Էֆենդու հովանավորության հետ, միտված էին այդ ծրագրի իրագործմանը:

Ճշտում անենք. Օսմանյան կայսրության մեջ ՀԱՅԿԱԿԱՆ երաժշտանոց ստեղծելու ծրագրերին:

Կոմիտասի մանկավարժական, խմբավարական աշխատանքները Էսայան, Պերպերյան և Կեղրոնական վարժարանում, նրա՝ իբրև Վարդապետի գործունեությունը Պոլսի Ս. Երրորդություն եկեղեցում հիմնականում հայ շնորհաշատ պատանիների ու աղջիկների հավաքագրումն էր՝ երաժշտանոցի համար:

Պոլսի Փրթի Շանի ձմեռային թատրոնում 1911 թ. Կոմիտասի համերգի կամ շքեղ նվագահանդեսի ստացված գումարը, պետք է տրամադրվեր Պոլսում երաժշտանոց հիմնելու օգտին:

1911 թվականին Պոլսի «Բյուգանդիոն» լրագրում (8. էջ 3) խոսվում է այն մասին, որ Կոմիտասի գործունեությունը Պոլսում առաջ է բերել նախադեպը չունեցող շարժում, որ նա ուզում է և պետք է ղեկավարի Թուրքիո մեջ հիմնված անդրանիկ հայկական կոնսերվատորիան, որտեղ երաժշտական գիտելիքներ հաղորդելուց բացի, մասնագետ-երաժիշտներ պատրաստելուց զատ, պետք է ծավալի նաև հրատարակչական գործունեություն, պետք է լույս ընծայի Հայ երաժշտության բոլոր հին ու նոր ծածկված իրական

գոհարները, որոնց շքեղ հավաքածուն ունի Կոմիտաս Վարդապետը:

Կոմիտասն իր համերգ-դասախոսություններով Պոլսում ունեցավ բյուրավոր համակիրներ և կողմնակիցներ, ավելին, կարճ ժամանակահատվածում Կոմիտասը դարձավ Կ.Պոլսի ամենահեղինակավոր և ազդեցիկ երաժշտական գործիչը:

«Եվրոպական որևէ ազգի երաժշտության պատմությունն ուսումնասիրելու համար, հարյուրավոր մասնագետներ են աշխատել, դարերով են քննադատել, տասնյակ ընկերություններ են օժանդակել և հարյուրավոր հատորներ են հրատարակվել: Բարի-բարի ցանկություններով ազգային երաժշտության պատմություն չի գրվի, մանավանդ՝ հայ երաժշտության» - գրում էր Կոմիտասը*:

Վարդապետն ինքը շրջիկ երաժշտանոց էր, ինքն էր կերտում մի ողջ ազգի երաժշտության պատմությունը:

Նախնական մտահղացմամբ, կոմիտասյան Կոնսերվատորին պետք է ունենար հետևյալ երեք բաժինները. 1) Հայկական երաժշտություն, 2) Իտալական երաժշտություն և նվագ, 3) Խմբապետներ պատրաստելու եկեղեցիներում խմբեր կառավարելու համար:

Կոնսերվատորիա բացելու մեջ կարևոր էր Կոմիտաս Վարդապետի խմբավարական գործունեությունը:

«Կոմիտաս Վարդապետի խումբը»՝ նրա Գուսան երգչախումբն, իր համերգային ծրագրերով և գործունեությամբ հանդիսանալու էր Պոլսում հայ երաժշտանոցի նախաքայլը (9. էջ 2, էջ 1):

Ոչ մի ուրիշ մայրաքաղաքում կամ մշակութային կենտրոնում Կոմիտաս Վարդապետը չունեցավ նման մեծաքանակ երգչախումբ:

«Գուսանը»՝ չուներ իր նախադեպը ոչ միայն Կոմիտասի խմբավարական գործունեության մեջ, այլև, առհասարակ Մերձավոր Արևելքի երաժշտական մշակույթում: Այդ իսկ պատճառով, «Գուսան» երգչախմբի համերգները ցնծությամբ էին ընդունվում ոչ միայն Թուրքիայի քաղաքներում (Պոլիս, Իզմիր, Ադաբազար, այլև Եգիպտոսի քաղաքներում՝ Կահիրե, Ալեքսանդրիա):

Խառը կազմով, գեղարվեստական բարձր արժանիքներով օժտված երգչախումբ էր «Գուսանը». որն աչքի էր ընկնում երգչախմբային հյուսվածքի մշակվածությամբ, ձայների հղկվածությամբ, մասնագիտական վարպետությամբ և անսահման կազմակերպվածությամբ:

Բազմաթիվ են ժամանակակիցների հիացական կարծիքները:

«Գուսան»-ն ուներ իր մանրամասն մշակված ծրագիրը.

«Ա. Իգական սեռը 16 և արականը՝ 18 տարեկանեն վեր պիտի ըլլա: Բ. Կպահանջվի ձայն, լսողություն: Գ. Խումբը ըլլալու է մնայուն: Դ. Խմբի անդամներուն, առանց թույլտվության, ուրիշ տեղեր կամ այլուր երգել թույլատրելի չէ: Ե. Մասնակցողները ընկերություն մը պիտի կազմեն, որոշ կանոններու ենթակա: Զ. Պիտի սորվեն և ուսանին ձրիապես եկեղեցական և աշխարհիկ, ազգային և օտար երաժշտություն հատընտիր կտորներ:

Է. Եվրոպական տարրական երաժշտություն, խմբական շնչամարզություն, ձայնամարզություն, ձայնական առողջապահություն, երգական վերլուծություն և երաժշտության համառոտ ընդհանուր պատմություն: Ը. Ժողովատեղին է Բերա Էսայան վարժարանի սրահը: Դասերը սկսելու են կեսօրեն հետո 4.30-ին իգական և 5.30-ին՝ արական սեռի համար մեկ ժամ. օրընդմեջ, իսկ կիրակի բոլոր ի միասին: Թ. Մասնավոր դաս (ձայնամարզություն, շնչամարզություն, ձայնական առողջապահություն, երգեցողություն, ներդաշնակություն, խմբավարություն-կրնան առնել միայն երաժշտական ունակությամբ օժտվածները, այդպիսին են միայն չքավորները ձրի)» (10. էջ 3):

1911 թ. փետրվարին Կոմիտաս Վարդապետը Կ. Պոլսում գեղարվեստասեր, մտավորական և ունևոր հայերից բաղկացած հանձնաժողով է ստեղծում երաժշտանոց բացելու նպատակով: Հիմնադիր անդամներն էին. Արաս Հալաճյանը, Արմենակ Մանուկյանը, Աստվածատուր Հարենցը, Էդուարդ Գարակյոզյանը, Մարթեն Հակոբյանը, Մարտիկ Էքսերճյանը, Միսակ Աշճյանը և Վահրամ Թորգոմյանը, որոնք սիրահոժար համաձայնում են օգնել և հայթայթել 2000 ոսկի (8. էջ 3):

Որոշվում է երաժշտանոցը հիմնադրել Կ.Պոլսի Բերա թաղամասում: Հավելենք, որ Պոլսո Բերա թաղամասը, որտեղ ապրում էր Կոմիտասը և փորձում Երաժշտանոց հիմնել, Եվրոպական թաղամաս էր: Առ այսօր Բերայում գոյություն ունեն ֆրանսիական, իտալական, հոլանդական, առհասարակ՝ կաթոլիկ եկեղեցիներ: Վիեննայի Մխիթարյան միաբանության նախաձեռնությամբ 1857 թվականին հիմնադրված լիցեյը, այդ շրջանում, նույնպես գտնվում էր Բերայի Բանկալթի թաղամասում: Կոնսերվատորիայում դասավանդելու համար Եվրոպայից բանիմաց դասախոսներ պետք է հրավիրվեին, իսկ Կովկասից՝ Մարգարիտ Բաբայանը: Աշակերտները սովորելու էին առանց վարձի, տրվելու էր թոշակ և կարիքավորներին ապրուստի հնարավորություն: Աչքի ընկնող ուսանողներին որոշվում էր ուղարկել Եվրոպա, այնտեղի երաժշտանոցներում կատարելագործվելու համար:

Պոլսում երաժշտանոցի հիմնադրումը չիրականանալու դեպքում պետք է այն իրականացվեր Իզմիրում, որտեղի ժողովուրդը մեծ խանդավառություն էր հանդես բերել այդ առթիվ: Երաժշտանոցի հիմնավոր ծրագրի մեջ մտնում էր Պատասխանատու մարմին՝ հստակ գործառույթներով, միջոցներով, ծախսերով Ա. Հիմնական դրամագլուխ, Բ. Անդամավճար, Գ. Հասույթներ՝ երգախառն և նվագախառն ներկայացումներից, անդամավճարներ մայրաքաղաքացիներից և գավառացիներից:

Կոմիտասի նախագծած Երաժշտանոցը ուներ կանոնադրություն և Ծրագիր. «Երաժշտանոցի նպատակը պիտի ըլլար

Ա. Մշակել հայ երաժշտությունը

1. Արևմտյան երաժշտությունն իբրև տիպար օրինակ ընդունելով և 2. Արևելյանը իբրև հարևան երաժշտություն նկատելով:

---

* Կոմիտաս Վարդապետ, «Հայն ունի ինքնուրույն երաժշտություն» (հրապարակվել է 1913-ին, Պոլսում, «Ազատամարտ» օրաթերթում):

Բ. Տարածել Հայ երաժշտությունը

1. Համերգներ և համանվագներ տալով,

2. Դասախոսություններ ընելով,

3. Թերթ և ժողովածու, երկեր և երգեր հրատարակելով:

Գ. Հաստատել՝ գործի ամբողջ ղեկն ի ձեռին պահելով՝

1. Հայ երաժշտարան,

2. Թատրոն՝ երգի, նվագի և ներկայացումներու համար,

3. Տպարան՝ պարագաներով և

4. Վաճառատուն՝ երաժշտական գիրքերու, թղթերու և գործիքներու համար:

Դ. Պահել անգրաղ և ընդունակ անձերե մշտական

1. երգչախումբ և

2. նվագախումբ:

Վարչությունը պետք է լիներ պատասխանատու մարմին. Երաժշտանոցը պետք է ունենար Գրասենյակ, Թատերասրահ, Երաժշտական գործիքներ (11. էջ 102):

Երաժշտանոցը պետք է ունենար Երաժշտական հրատարակություն: Այս նախաձեռնությանը արձագանքուս էր Պոլսի ոչ միայն հայ, այլև օտարալեզու մամուլը:

Երաժշտանոցը պետք է դառնար հայկական քաղաքակրթության ևս մեկ վկայությունը:

1915 թ. մարտին թուրք պետական գործիչներ Թալեաթ Բեյի, սուլթանի որդի Մեհմիթ Իշխանի և բարձրաստիճան այլ անձանց ներկայությամբ տեղի է ունենում

«Թուրք օջախի» հերթական գրական-երաժշտական հանդեսը: Բացման խոսքով հանդես է գալիս «Թուրք օջախի» նախագահ Համտուլլահ Սուպհի բեյը: Հրավիրյալների մեջ ներկայացնելով Կոմիտաս Վարդապետին նա բարձր է գնահատում Կոմիտասի մեծությունը՝ գեղջուկ երգերի հավաքման, երաժշտանոց բացելու բարձր նպատակների համար: Նա առանձնացնում է Թուրքիայի մշակութային կյանքում հայերի ունեցած բացառիկ դերը: Կոմիտասը ելույթ է ունենում բանախոսությամբ, այնուհետև երգում «Կալի երգը», «Հով արեք սարեր ջան» ու «Կռունկը»:

Մեկ ամիս անց, թուրք պետական գործիչներ նույն Թալեաթի, Էնվերի և Նազըմ բեյի կարգադրությամբ, ապրիլին, այսպես ասած «Կարմիր բերքահավաքին», կամ «արյունոտ կիրակիին» տեղական իշխանություններին հրաման է արձակվում հայերին բնաջնջելու և արաբական անապատներն ուղարկելու: Կոմիտաս Վարդապետը, մի շարք հայ մտավորականների հետ, ձերբակալվում է և ուղարկվում է Թուրքիայի ծայրամասերը՝ Չանկրը և Այաշ...

1946 թ. Հայաստանի Մինիստրների խորհրդի որոշմամբ Երևանի պետական կոնսերվատորիան անվանակոչվում է Կոմիտասի անունով:

2021 թ. Կոմիտասի անունը կրող կոնսերվատորիան տոնում է իր հարյուրամյակը:

Եթե խորամուխ լինենք Մեծ Վարդապետի կոնսերվատորիական ծրագրերի մեջ, կտեսնենք դրանցից շատերի իրագործումը: Ամենակարևորը՝ ծաղկում է հայ շնորհալի երիտասարդների համար գործող երաժշտանոցը, աշխարհին ներկայանալով մշակութային բարձր նվաճումներով: Այն երաժշտանոցը՝ որի ստեղծման համար նահատակվեց ամենահանճարեղ հայ երաժիշտներից մեկը Կոմիտաս Վարդապետը:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. //Սովետական արվեստ, 1969 թ., համար 11: //Sovetakan arvest, 1969 th., hamar 11.
2. *Սահակյան Լ. Զ.,* Կոմիտասը և ֆրանսիական մշակույթը, Կոմիտաս Վարդապետ. հոդվածների ժողովածու, Եր., 2019 թ.: *Sahakyan L. Z.,* Komitas' ev Fransiakan mshakuyth', /Komitas Vardapet. Hodvatsneri zhoghovatsu, Yer., 2019 th.
3. *Կոմիտաս Վարդապետ,* Նամականի, Եր., 2009 թ.: *Komitas Vardapet,* Namakani, Yer., 2009 th.
4. Գարեգին Լևոնյանի հուշերը, /ժամանակակիցները Կոմիտասի մասին, 1960 թ.: Garegin Levonyani husher', /Zhamanakakaitzner' Komitasi masin, 1960 th.
5. *Չոպանյան Ա.,* Երկեր, Եր., 1988թ.: *Chopanyan A.,* Yerker, Yer., 1988 th.
6. //Սուրհանդակ, 1911 թ., համար 273: //Suhandak, 1911 th., hamar 273.
7. *Սահակյան Լ. Զ.,* Կոմիտաս Վարդապետը Կ. Պոլսում, Կոմիտաս Վարդապետ. հոդվածների ժողովածու, Եր., 2019 թ.: *Sahakyan L. Z.,* Komitas Vardapet' K.Polsum, /Komitas Vardapet. Hodvatsneri zhoghovatsu, Yer., 2019 th.
8. //Բյուզանդիոն, 1911 թ., համար 4371: //Byuzandion, 1911 th., hamar 4371.
9. հրապարակված է. //Ազատամարտ, Կ. Պոլիս, N 788, և //Բյուզանդիոն, Կ. Պոլիս, 1912 թ., N 4632: //Azatamart, K. Polis, N 788, ev //Byuzandion, K. Polis, 1912 th., N 4632.
10. //Ազատամարտ, 1912 թ., համար 788: //Azatamart, 1912 th., hamar 788.
11. *Ազատյան Թ.,* Կոմիտաս Վարդապետ, 1931 թ.: *Azatyan Th.,* Komitas Vardapet, 1931 th.

Բանալի-բառեր. *Կոմիտաս Վարդապետ, Կ. Պոլիս, երաժշտանոց, ծրագիր, հայ երաժշտություն, երգչախումբ, երգ:*

Ключевые слова: *Комитас архимандрит, Константинополь, консерватория, программа, армянская музыка, хор, песня.*

Keywords: *Archimandrite Komitas, Constantinople, conservatory, programme, Armenian music, choir, song.*

Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

Տեղեկություններ հեղինակի մասին. ՍԱՀԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ԶԱՎԵՆԻ (ծ. 1972 թ. ք. Երևան): Ավարտել է' 1995 թ. Երևանի պետական կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը (ղեկ. դոկտոր, պրոֆեսոր ժ. Զուրաբյան), 2000-ին ասպիրանտուրան «Երաժշտագիտություն» մասնագիտությամբ: 2007 թվականին պաշտպանել է «Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ» խորագրով ատենախոսական թեզը (ղեկ. պրոֆեսոր Արաքսի Սարյան): Դասավանդում է' 1995-ից ԵՊԿ-ի Երաժշտության պատմության ամբիոնում, 2010-ից՝ դոցենտ, 2014-ից նույն ամբիոնի վարիչ: Հեղինակ է մենագրությունների և գիտական հոդվածների (այդ թվում Skopus միջազգային գիտական շտեմարանում)' Կոմիտաս Վարդապետ (մենագրական հոդվածների ժողովածու) նվիրված Կոմիտասի 150- ամյակին: Եր, Տիգրան Մեծ հրատ., 2019, 305 էջ, Ռոբերտ Աթայան. հոդվածների ժողովածու (կազմող Լ.Սահակյան), Եր, Հեղինակային հրատարակություն, Եր, Տիգրան Մեծ, 2021 թ, - 352 էջ, Ferenc Liszt's appraisal by Komitas Vardapet, //Anuario musical, N 67, enero- diciembre, 2012, p. 215-222:, Richard Wagner und Komitas Vardapet, //ADK - Armenisch Deutche Korrespondenz. - Frankfurt /M. 2016.- Heft 4. Nr. 173. P. 31-33, portr., Комитас Вардапет и русская культура, //Музыкальная Академия, 2017 (2), стр. SI- 89. M.: Композитор,Նեոդասականության դրսևորումները Տիգրան Մանսուրյանի ստեղծագործության մեջ, Կանթեղ, Գիտական հոդվածներ, N 1 (74), Եր, Ասողիկ, 2018թ, էջ 260-271, Կոմիտաս Վարդապետը «Բազմավէպ»-ի էջերում, //Բազմավէպ, հայագիտական հանդեսի 175-ամյակին նվիրված գիտաժողով, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Եր, 2019 թ, Сараджев и Армения, //Музыковедения, Москва, 2019, с. 41-47., Михаил Гнесин и армянская композиторская школа, Сборник статей Международной научнопрактической конференции, Российская академия музыки им. Гнесиных, Мемориальный музей-квартира Е. Ф. Гнесиной, Москва, 2019, с. 41-49., Դիտարկումներ Կոմիտաս Վարդապետ Հայ Առաքելական եկեղեցի առնչությունների շուրջ, //Պատմաբանասիրական հանդես, 2021 N 3, էջ 121-134:

Сведения об авторе: СААКЯН ЛУСИНЕ ЗАВЕНОВНА (род. 1972, Ереван). Окончила отделение музыковедения Ереванской государственной консерватории им. Комитаса (руководитель - доктор, проф. Ж. Зурабян), аспирантуру по специальности “Музыковедение” (2000). Защитила диссертацию по теме “Комитасоведение в армянском музыковедении”, научный руководитель - проф. Аракси Сарьян, (2007). Преподает на кафедре истории музыки ЕГК (с 1995). Доцент (2010), заведует кафедрой (с 2014). Автор монографий и научных статей (в том числе в международном научном реестре Scopus): “Комитас Вардапет” (сборник, посвященный 150-летию Комитаса, Ер., 2019); “Роберт Атаян. Сборник статей” (составитель Л. Саакян) (Ер., 2021); “Ferenc Liszt's Appraisal by Komitas Vardapet”, //Anuario musical, N 67, 2012; “Richard Wagner und Komitas Vardapet”, (Armenisch Deutsche Korrespondenz, Frankfurt, M., 2016); “Комитас Вардапет и русская культура” //Музыкальная академия, М., 2017); “Неоклассицизм в творчестве Тиграна Мансуряна” (//Кантех. Ер., 2018); “Комитас Вардапет на страницах сборника Базмавеп” (Материалы научной конференции, посвященной 175-летию журнала “Базма- веп”. Ер., 2019); “Сараджев и Армения” (//Музыковедение. М., 2019); “Михаил Гнесин и армянская композиторская школа” (Материалы Международной научно-практической конференции. М., 2019); “Наблюдения о взаимоотношениях Комитаса Вардапета и Армянской Апостольской церкви” (Историко-филологический журнал НАН РА, 2021, N3).

Information about the author: SAHAKYAN LUS/NE ZAVEN (b. 1972, Yerevan). Graduated from the Department of Musicology at Yerevan State Komitas Conservatory (class of Prof. J. Zurabyan). In 2000, she completed her postgraduate studies in musicology. In 2007 she defended her PhD thesis on "Komitas Studies in Armenian Musicology" (research supervisor Prof. Araksia Saryan). Since 1995, she has been teaching at the Department of Music History at the YSC. Since 2010, she has been a Docent, and since 2014, the head of the department. Lusine Sahakyan is the author of monographs and scientific articles (including publications in Scopus): Komitas Vardapet. Collection of Articles, dedicated to the 150th anniversary of Komitas (Yerevan, 2019); Robert Atayan. Selected Articles (compiled by L.

Резюме

Кандидат искусствоведения, доцент ЕГК Лусине Завеновна Саакян. - “Планы архимандрита Комитаса по созданию консерватории”.

В музыкально-просветительской деятельности Комитаса особое место занимает идея о необходимости создания и внедрения целенаправленного систематизированного музыкального образования. Известно, что уже в период своего обучения в Германии, Комитас придавал особое значение систематизации профессиональных музыкальных знаний и навыков. На протяжении всей своей творческой деятельности он вынашивал замысел создания национальной консерватории, разрабатывал про граммы обучения. В силу исторических событий этим планам не суждено было осуществиться.

В данной статье в хронологической последовательности представлена составленная Комитасом работа по созданию консерватории. Рассмотрены предпосылки и побудительные причины его переезда в Константинополь, освещен весь спектр деятельности Вардапета в данный период его жизни.

Summary

Ph.D. in Arts, Docent at the Yerevan State Komitas Conservatory Lusine Zaven Sahakyan. - “Archimandrite Komitas’ Program of the Establishment of the Conservatory”.

In Komitas' music and educational work, the idea of the necessity of developing and implementing a purposeful musical education system occupies a special place. It is known that already during his studies in Germany, Komitas has considered the systematization of professional musical knowledge and skills particularly important. Throughout his career, he nurtured the idea of creating a national conservatory and developing a training programs. Due to historical events, these plans were never implemented.

This articles introduces the conception developed by Komitas for establishing a conservatory. The prerequisites and motives for his move to Constantinople are considered, covering the whole range of Vardapet's activities during that period of his life.